

Սուրբ Գրոց Սերտողություն : Դաս Թի 159

Ջան Կալին – Ջան Կալինը ծնեց Նոյն, Ֆրանսիայում, 1509 թականին: Տասնչորս տարեկանում Կալինը արձանագրեց Փարիզ Համալսարանում, որպեսզի ուսումնասիրեր Լատին եւ ասուածաբանութիւն՝ այդ նպատակով որ քահանայ դառնար, սակայն իր հօր եւ եկեղեցու միջեւ եղած որոշ խնդիրների պատճառով, նա ապա արձանագրեց Օշլեան Համալսարանում, որպեսզի ուսումնասիրեր իրաւաբանութիւն: 1528 եւ 1533 թականների միջեւ Կալինը դարձի եկա՝ միջնադարեան Կաթոլիկութիւնից ասուածաշնչական հաւատքի ի Զրիստոս, ընդգրկելով Բողոքական վարդապետութիւնները: Վերակազմների դէմ եղած հակառակութիւնների պատճառով Կալինը մեկնեց Ֆրանսիա եւ իր Վերակազմ ընկերների խնդրանքների պատճառով վերջապէս հաստատեց Ժընեւում, Զւիցերիա՝ որպէսզի օգնէր վերակազմելու քաղաքը: Բացի մի կարճ քստրման, Կալինը մնաց Ժընեւ իր կեանքի մնացած օրերը՝ քարոզելով եւ ուսուցանելով Սուրբ Գիրքը, պաշտպանելով Բողոքական Վերակազմութեան վարդապետութիւնները: 1536ում Կալինը հրատարակեց իր գլուխ գրոց առաջին տպագրութիւնը՝ «Զրիստոնեայ Կրօնքի Հաստատութիւնները», ճանաչած որպէս հաւանաբար ամենակարեւոր կարգաւորած ասուածաբանութիւնը երբեմիցէ գրած: Բացի այդ, Կալինը գրեց Ասուածաշնչի մօտաւորապէս բոլոր գրքերի նկատմամբ եղած մեկնաբանութիւններ, բացատրականօրէն լուսաբանելով Աստուծոյ Խօսքը ու դրա գործադրութիւնը:

Շատ նման Լութերին, Կալինի ասուածաբանութիւնը, նամանաւանդ Աստուծոյ գերիշխանութեան, մարդու անկման, մեղքի եւ ընկած մարդու բնութեան, ասուածային նախասահմանութեան եւ վերածնութեան վերաբերեալ, Օգոստինոսի ուսուցումներից մեծապէս ազդած եւ համաձայնած էր: Կալինը ընդունեց որ նոյնիսկ անկումից յետոյ մարդը ունի ընդունակութիւնը ստածելու եւ տրամաբանելու, սակայն այդ ընդունակութիւնը խորապէս վնասուած է մեղքից, եւ ուստի հոգեւոր հարցերի նկատմամբ նա անկարող է հասկանալ, ընտրել կամ անել որեւէ բարի բան: Նա գրում է թէ ընկած մարդը մեղքի գերութեան տակ «գրկած է ոչ կամքից, այլ կամքի ողջմտութիւնից»: Օգոստինոսի նման, Կալինը հաստատեց թէ բնական մարդը գրկած է ազատութիւնից: Լութերի նման, նա գանազանեց հարկաւորութեան եւ ստիպման միջեւ: Նա բացատրեց թէ ընկած մարդը ըստ իր բնութեան չարին հակամէտ է՝ հարկաւորութեամբ ու ոչ ստիպումից, եւ ուստի կարող է անել ոչինչ բացի մեղք: Միմիայն Սուրբ Հոգու վերածնութեան գործով է որ մի ընկած մարդ կ'ազատի իր մեղքի գերութիւնից, ուր մարդու բնութիւնը, միտքը, կամքը ու սիրտը փոխուում են՝ չարից դէպի բարի, դառնալով Աստուծոյ: Կալինը ուսուցանեց թէ Աստուծոյ այս շնորհքը մենակատար եւ անդիմադրելի է:

Յակոբոս Արմէնիոս – Յակոբոս կամ Զեյնգ Արմէնիոսը ծնեց Օդէվաթըր, Նիդեռլանդներում, 1560 թականին: Նա ուսանող էր Լեյդեն Համալսարանում 1576ից մինչեւ 1582՝ ուսումնասիրելով ազատ արւեստներ եւ ասուածաբանութիւն: 1582ում նա սկսեց ասուածաբանական ուսումնասիրութիւն Ժընեւում Թէոդոր Բէզայի ձեռքի տակ՝ մի Ֆրանսիացի Վերակազմ ասուածաբան եւ հովիւ՝ Ջան Կալինի աշակերտ ու զօրաւոր յաջորդող: 1550 թականներում Վերակազմութեան վարդապետութիւնները հանրաճանաչած էին Նիդեռլանդներում: Արմէնիոսը բարձրօրէն գնահատում եւ յարգում էր Օգոստինոսի եւ Կալինի աշխատանքները: 1587ում Արմէնիոսը Ամստերդամի Հոլանդական Վերակազմ եկեղեցիներից մեկումը հովիւ դարձաւ: 1589ում մինչ փորձում էր պաշտպանել Կալինական նախասահմանութիւնը, աւելի ուսումնասիրութեան միջոցով Արմէնիոսը սկսեց կասկածել նախասահմանութեան անպայմանական վարդապետութիւնը, եւ տարիների ընթացքում մշակեց ասուածային շնորհքի եւ մարդկային ազատութեան նկատմամբ եղած տեսանկիւններ որոնք հեռացան Կալինի ու Բէզայի Վերակազմ հաւատամքից: Որոշ հակառակութեան հանդերձ, 1603ում Արմէնիոսը միացաւ Լեյդեն Համալսարանի ասուածաբանական ուսուցչական մարմնին, եւ մնաց մի ուսուցիչ մինչեւ իր մահը: Լուրջ հարցումներ սկսեցին բարձրանալ Արմէնիոսի ասուածաբանութեան վերաբերեալ: Երբ իր գաղափարները աւելի բացայայտ դարձան, լարում եւ գրգռութիւն յառաջացան Վերակազմ Եկեղեցիի միջեւ, եւ սաստիկ վիճաբանութիւն տեղի ունեցաւ Արմէնիոսի եւ նրա հակառակորդների միջեւ յաջորդ մի քանի տարիների ընթացքում, առանց բաւարար լուծման:

Իր մահից յետոյ, Արմէնիոսի ուսուցումների Հոլանդական հետեւողները ճանաչեցին որպէս Յանդիմանողները, որոնք 1610ին կառավարութեան ներկայացրան իրենց «Յանդիմանական Հինգ Յօդաւճները», ընդգծելով Արմէնիոսի ասուածաբանական գաղափարները՝ հակառակ Կալինական վարդապետութիւններին: Յանդիմանողների հինգ յօդաւճներն էին պայմանական ընտրութիւն, ընդհանրական քաւութիւն, լիովին պղծութիւն, դիմադրելի շնորհք, եւ անորոշութիւն սրբերի յարատեւութեան նկատմամբ: Վիճաբանութիւն եւ տարաձայնութիւն աճեցին այս վարդապետութիւնների պատճառով, մինչեւ վերջապէս 1618ում մի ազգային եկեղեցական խորհուրդ ժողովեց Դորդրէչ քաղաքում՝ ճանաչած որպէս Դորթի Սինոդը, որպէսզի նկատի առնել այս խնդիրը: Խորհուրդը միաձայնօրէն դատապարտեց Յանդիմանողների յօդաւճները, պատասխանելով իւրաքանչիւրը հակառակ յօդաւճներով՝ ճանաչած որպէս Դորթի Կանոնները՝ վերահաստատելով եւ պաշտպանելով Վերակազմ վարդապետութիւններին ու չափանիշները: Նրանց պատասխանը յետագայում հանրաճանաչեց որպէս «Կալինականութեան Հինգ Կէտերը»՝ այսինքն անպայմանական ընտրութիւն, սահմանափակ քաւութիւն, լիովին պղծութիւն, անդիմադրելի շնորհք, եւ սրբերի յարատեւութիւնը: